ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

« ---» « ----------» 2023թ. **N ----------**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ տրված հարցադրումների

1. ՀՀ վիճակագրական կոմիտեի 25.11.2023թ. հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան զեկույցի համար հիմք հանդիսացած տվյալների և ցուցանիշների հավաքագրումը իրականացվել է բացառապես ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
   Աղքատության հաշվարկման մեթոդաբանության նպատակով վիճակագրական կոմիտեն կիրառել է միջազգային գործընկեր կազմակերպությունների փորձը: Վերոգրյալի հիման վրա և համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջների՝ Ձեր կողմից փնտրվող տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Վիճակագրական կոմիտե:
2. 2022-23 թվականներին ՀՀ Արմավիրի մարզում ոռոգման ջրի բացակայության և սակավության պատճառով չի մշակվել 10916 հա հողատարածություն: Այդ տարածքները գյուղատնտեսական արտադրության մեջ ներառելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանորոգել 48, հորատել 35 խորքային

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

հորեր, կառուցել 6 պոմպակայան և հիմնանորոգել 18.3կմ միջտնտեսային և 141.9կմ ներտնտեսային ցանցեր, որոնց իրականացման համար հնարավորության սահմաններում դրանք կընդգրկվեն համայնքների սուբվենցիոն ծրագրերում:

Недействительная подпись

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Կատարող՝ Առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչություն՝
Վարդան Ալեքսանյան
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ՝
Արթուր Այվազյան
Հեռ. ՝ /0237/ 2 11 57